ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2026 թվականի N: 432 - Ա ք. Գյումրի

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Արտաշես Հակոբյանի 2026 թվականի նոյեմբերի 4-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու Վահան Թեքեյանի անվան վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արտաշես Հակոբյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 13 աշխատանքային օր՝ 2026 թվականի նոյեմբերի 7-ից 21-ը ներառյալ:

2. Վարչատնտեսական մասի համակարգողի բացակայության դեպքում համակարգողին վերապահված գործառույթներն իրականացնում է տվյալ կազմակերպության տնօրենը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու Վահան Թեքեյանի անվան վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Արտաշես Հակոբյանի 2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված

արձակուրդից մնացած մասը՝ 17 աշխատանքային օր, տեղափոխել և տրամադրել 2027 թվականի ընթացքում:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է: